ՓՈԽԳՆԴԱՊԵՏԻ ՇԻՐՄԱՔԱՐԸ

Ա. Ա. Հարությունյան

Հայ և օտար պատմագրությունը, անդրադառնալով Շուշի քաղաքի պատմական անցյալին, կարողացել է լուսաբանել ընդամենը երեք հարյուր տարվա առանձին դրվագները միայն: Այդ բացը լրացնել հնարավոր է միայն Շուշի քաղաքի շրջակա գերեզմանատների տապանաքարերի և 9-13-րդ դարերի խաչքարերի ուսումնասիրության միջոցով, որոնք պարունակում են արժեքավոր արձանագրություններ: Սակայն, ամենակործան ժամանակը կարող է փոշիացնել դրանք, ուստի՝ պետական մոտեցում է պահանջվում այդ պատմական հուշարձանների պահպանության և ուսումնասիրությունը գիտական մակարդակով կազմակերպելու համար: Նկարագրելով ներքին հանգստարանի մի ուշագրավ տապանաքար, տողերիս հեղինակը փորձում է իր լուսաբանությունը ներդնել այդ բնագավառում և հետաքրքրություն առաջացնել Շուշիում ծաղկում ապրած քանդակագործական արվեստի հանդեպ, որը մի շարք գլուխգործոցներ է տվել մարդկությանը:

Նշենք, որ գերեզմանաքարերի ուսումնասիրությունն առանց չափագրման ոչ ամբողջական է դարձնում հետազոտությունը: Այնուամենայնիվ, ընդհանուր հետազոտությունից հետո կարելի է եզրակացնել, որ Շուշիում գործել են քարագործ-վարպետների մի շարք դպրոցներ, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր ոճը:

Հետաքրքրական է նաև, որ մեր օրերի քանդակագործները խուսափում են որպես հումք օգտագործել Շուշիի քարը, ինչը վկայում է նախորդ դարերի քանդակագործական տեխնիկայի գաղտնիքների անվերադարձ կորստի մասին:

Կար ձգտում միատեսակ կամ միաչափ շիրմաքարեր կանգնեցնելու առումով, թեև որոշ մեծահարուստների առանձնացող հսկայածավալ գերեզմանաքարերի առկայությունը երբեմն խախտում է թվացյալ միատարրությունը: Իրականում շիրմաքարերն իրարից տարբերվում են խաչերի, պսակների, ծաղկազարդերի և քնարական բնույթի տարատեսակ պատկերներով ու արձանագրություններով:

Սխեմատիկ նկարներով պատկերված խնդրո առարկա շիրմաքարը, ի տարբերություն կողքին գտնվող Թառումյանցների հսկայական երկու շիրմաքարերի, կարող էր այդպես էլ ուշադրություն չգրավել, եթե չլինեին նրա արձանագրությունները: Շիրմաքարի նրբատաշ խաչը դիտելիս, անցորդն ակամայից նայում է դեպի արևելք(ինչը վկայում է, որ չէր խախտվում հայկական թաղումների ավանդույթը: Աճյունը հողի մեջ ամփոփելիս նրա դեմքը պետք է հառված լիներ դեպի արևելք): Խաչի երկու կողմը զարդարում է հետևյալ արձանագրությունը.

«Խաչ իս եղիցի Մեղապատ էստ էր»:

Շրջանցելով մատղաշ ակացիաների թփուտը, շիրմաքարի աջ երեսին ընթերցում ենք հետևյալը.

«Քաջամարտիկն Իսայ յաղթական փառօք
Զիմամն Շամիլ ի պարտութիւն մատնեաց
եւ յետս դարձոյց զգերեալ զընտանիս
ճաւճաւադէ Օրբել-վրաց իշխանաց:
1854»:

Հետևի կողմից շրջանցելով շիրմաքարը, որտեղ ոչ մի գրություն չկա, ձախ երեսին ընթերցում ենք.

«Հանգիստ
Հայազգի քաջ զինվորական փոխգնդա-
պետ Իսայայ Յովհաննիսեան Ղրամեանց
ծնի 1821 ամի եւ վախճ. ի 1886 ամի ի 18 մարտի»:

Տապանաքարի տանիքը զարդարող խաչաձևված թրի և պատյանի քանդակի տակ ռուսերեն արձանագրությունն է.

"ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ
ПОДПОЛКОВНИКА ИСАИ
ИВАНОВИЧА ГРАМОВА
РОДИЛСЯ 18 $\frac{II}{2}$ 21

СКОНЧАЛСЯ 18 $\frac{III}{18}$ 86

Պարզվում է, որ իմամ Շամիլին գերող շուշեցի գեներալ Յովհաննես Լազարևից բացի, մոլեռանդ լեռնականների դեմ կռվել է նաև նրա մի այլ հայրենակից, փոխգնդապետ Եսայի Ղրամյանցը(Գրամովը), որի կյանքի ու գործունեության վերաբերյալ առայժմ չի հաջողվել մեզ գտնել որևէ վավերագիր կամ պատմական աղբյուր: Չի բացառվում, որ Շուշին ցարական Ռուսաստանի բանակին տված լինի այլ նշանավոր, բայց մեզանում քիչ հայտնի զորահրամանատարներ և զինվորականներ: Եվ այդ հարցում որոշակի պարզություն կարող է մտցնել ոչ միայն Շուշիի ներքին, այլև մյուս գերեզմանատների արձանագրությունների ուսումնասիրությունը:

НАДГРОБИЕ ПОДПОЛКОВНИКА

А. А. Арутюнян

(Резюме)

Автором показано, что против Имама Шамиля в рядах царской армии воевал не только Иван Лазарьев, но и другой уроженец города Шуши - подполковник Исаи Иванович Грамов. Он, как свидетельствует надгребная надпись на его могиле, разбил Шамиля и освободил из плена семью грузинского князя Орбеля Чавчавадзе.

THE LIEUTENANT-COLONEL GRAVESTONE

A. A. Haroutunian

(Summary)

The author proves that in the tsar army fighting against Imam Shamil there served not only Ivan Lazariev but also another native of Shushi town lieutenant -colonel Isaiah Ivanovich Gramoff. He as it is evident from the inscription on his gravestone routed Shamil and rescued from captivity the family of Georgian Prince Orbel Chavchavadze.




ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ
ПОДПОЛКОВНИКА ИСАИ
ИВАНОВИЧА ГРАМОВА
родился 18 II 21
скончался 18 III 86